«Հայաստանի Պետական Տնտեսագիտական Համալսարան» ՊՈԱԿ

Ֆինանսական հաշվետվություններ և աուդիտորական եզրակացություն 2013 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվեփակված ժամանակաշրջանի վերաբերյալ

Երևան,
ՀՈՒՆԻՍ 2014թ.

Բովանդակություն Էջ

Անկախ աուդիտորական եզրակացություն	2
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	3
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	4
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	5
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	6
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	7

«Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ

ՀՀ , ք Երևան
Նուբարաշեն, 10 փող, տուն 6 Հեռ: 57 28 42
ՏԳՀ, Երևան, Մյասնիկյանի պողոտա 5/1
Աուդիտորական գործունեության լիցենզիա թիվ ԱԾ N 048 առ 02.08.2006թ.
տրված ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից՝ անժամկետ

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Հայաստանի Պետական Տնտեսագիտական Համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն (ՊՈԱԿ) 2013թ. դեկտեմբերի 31-ին հաշվեփակված ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ

Ներկայացվում է «Հայաստանի Պետական Տնտեսագիտական Համալսարան» ՊՈԱԿ ղեկավարությանը

Մեր կողմից իրականացվել է «Հայաստանի Պետական Տնտեսագիտական Համալսարան» ՊՈԱԿ, այսուհետ՝ Կազմակերպություն, ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, որոնք ներառում են 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և այլ ծանոթագրություններ:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Կազմակերպության ղեկավարությունը պատասխանատու է ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ՝ զերծ խարդախության կամ սխալների արդյունքում առաջացած էական խեղաթյուրումներից:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մենք պատասխանատու ենք աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան մեր կողմից իրականացված աուդիտի հիման վրա նշված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր արտահայտած կարծիքի համար: Այդ ստանդարտներով պահանջվում է աուդիտը պլանավորել և անցկացնել՝ ֆինանսական հաշվետվություններն էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ ողջամիտ երաշխիքներ ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում ու համապատասխան ծանոթագրություններում արտացոլված տվյալները հիմնավորող փաստերի ձեռքբերման նպատակով մշակված ընթացակարգեր, որոնց ընտրությունը կախված է խարդախությունների և սխալների հետևանքով ֆինանսական հաշվետվություններում էական խեղաթյուրումների առկայության ռիսկերի վերաբերյալ աուդիտորական գնահատումներից: Ռիսկերի գնահատումները կատարելիս՝ աուդիտորը մշակում է համապատասխան ընթացակարգեր՝ ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության գնահատման, այլ ոչ թե Կազմակերպության ողջ ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք կազմելու համար:

Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների և ղեկավարության կողմից կատարված գնահատումների, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ համապատասխան աուդիտորական ապացույցներ մեր կարծիքն արտահայտելու համար:

Կարծիք

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում 2013թ դեկտեմբերի 31-ի դրությամբ «Հայաստանի Պետական Տնտեսագիտական Համալսարան» ՊՈԱԿ ֆինանսական վիճակը, ինչպես նաև նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքները և դրամական հոսքերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

27 հունիսի 2014թ.

Տնօրեն Մելս Պետրոսյան

Աուդիտոր Հասմիկ Հանեսյան

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

<Հայաստանի Պետական Տնտեսագիտական Համալսարան> ՊՈԱԿ

2013թ դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

	Ծանոթ	2013թ դեկտեմբերի 31-ի դրությամբ վերահաշվարկված	2012թ դեկտեմբերի 31-ի դրությամբ
			հազար ՀՀ դրամ
ԱԿՏԻՎ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	6	1,574,447	1,244,063
Ոչ նյութական ակտիվներ	7	4,997	3,770
Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների գծով		15,524	16,490
Հետաձգված հարկային ակտիվներ		-	-
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		**1,594,968**	**1,264,323**
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	8	65,680	32,750
Առնտրային և այլ դեբիտորական պարտքեր	9	525,362	509,118
Այլ ընթացիկ ակտիվներ		10,605	1,783
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	10	728,261	892,610
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		**1,329,908**	**1,436,261**
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		**2,924,876**	**2,700,584**
ԿԱՊԻՏԱԼ և ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Սեփական կապիտալ			
Պահուստային կապիտալ		79,166	23,462
Սեփական կապիտալի այլ տարրեր		479,293	515,119
Վերագնահատումից և վերաչափումից տարբերություններ		45,459	-
Ընդամենը սեփական կապիտալ		**603,918**	**538,581**
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ակտիվներին վերաբերող շնորհներ	11	1,006,381	989,470
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		**1,006,381**	**989,470**
Ընթացիկ պարտավորություններ			
Առնտրային և այլ կրեդիտորական պարտքեր	12	1,038,267	890,695
Պարտքեր պարտադիր սոցիալական ապահովության գծով		-	3,172
Պարտքեր աշխատավարձի եւ աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով	12	4,985	4,730
Պարտքեր աշխատակիցներին արձակուրդայինի պահուստի գծով	12	35,618	-
Զուտ հետաձգված հարկ (պարտավորություն)		21,381	
Եկամուտներին վերաբերող շնորհներ	11	206,020	257,768
Այլ ընթացիկ պարտավորություններ	13	8,306	16,168
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		**1,314,577**	**1,172,533**
ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		**2,924,876**	**2,700,584**

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են <Հայաստանի Պետական Տնտեսագիտական Համալսարան> ՊՈԱԿ-ի ղեկավարության կողմից 2014թ. հունիսի 20-ին: Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող կից ծանոթագրությունների հետ մեկտեղ էջ 7-26:

Ռեկտոր
Կ. Աթոյան

Գլխավոր հաշվապահ
Ա. Մարգարյան

ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

<Հայաստանի Պետական Տնտեսագիտական Համալսարան> ՊՈԱԿ

2013թ դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

	ծանոթ	2013թ	2012թ
Հասույթ	14	3,181,683	2,825,456
Վաճառքի ինքնարժեք	14	(2,162,166)	(1,802,557)
Համախառն շահույթ (վնաս)		**1,019,517**	**1,022,899**
Իրացման ծախսեր	14	(383)	(1,210)
Վարչական ծախսեր	15	(919,431)	(782,057)
Գործառնական այլ եկամուտ	16	109,303	106,342
Գործառնական այլ ծախսեր	16	(83,047)	(114,039)
Շարունակվող գործունեությունից այլ օգուտ/(վնաս)	17	(49,265)	(54,397)
Զուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկը		**76,694**	**177,538**
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	18	(56,816)	(44,462)
Շարունակվող գործունեությունից զուտ շահույթ (վնաս)		19,878	133,076
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-
Ընդհանուր համապարփակ ֆինանսական արդյունք		19,878	133,076

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղադրիչ մասը կազմող կից ծանոթագրությունների հետ մեկտեղ, էջ 7-26 :

Ռեկտոր
Կ. Աթոյան

Գլխավոր հաշվապահ
Ա. Մարգարյան

ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

<Հայաստանի Պետական Տնտեսագիտական Համալսարան> ՊՈԱԿ

2013թ դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

	Պահուստային կապիտալ	Կուտակված շահույթ (չծածկված վնաս)	Վերագնահատումից և վերաչափումից տարբերություններ	Սեփական կապիտալի այլ տարրեր	Ընդամենը
2012թ հունվարի 1-ի դրությամբ	16,648	-	-	390,577	407,225
Սխալների ուղղում	-	-	-	(1,720)	(1,720)
Ֆինանսական արդյունք	-	133,076	-	-	133,076
Ներքին շարժեր	6,814	(133,076)	-	126,262	-
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-	-	-
2012թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	23,462	-	-	515,119	538,581
Ներքին տեղաշարժ	54,710	-	-	(54,710)	-
Ֆինանսական արդյունք	-	19,878	-	-	19,878
Ներքին շարժեր	994	(19,878)	-	18,884	-
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	143,164	-	143,164
Տեղափոխություն ակտիվներին վերաբերվող շնորհ	-	-	(97,705)	-	(97,705)
2013թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	79,166	-	45,459	479,293	603,918

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող կից ծանոթագրությունների հետ մեկտեղ էջ 7-26 :

Ռեկտոր
Կ. Աթոյան

Գլխավոր հաշվապահ
Ա. Մարգարյան

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

<Հայաստանի Պետական Տնտեսագիտական Համալսարան> ՊՈԱԿ

2013թ դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

հազար ՀՀ դրամ

	2013թ	2012թ
Դրամական միջոցների տարեսկզբի մնացորդը	**892,610**	**465,158**
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հաճախորդներից ստացված դրամական միջոցներ	3,013,046	3,010,614
Կրթաթոշակ	57,157	68,522
Այլ մուտքեր	36,179	9,595
Ստացված շնորհների գծով մուտքեր	265,250	260,272
Ստացված շնորհների գծով ելքեր	(45,261)	-
Աշխատակիցներին վճարված դրամական միջոցներ	(1,926,500)	(196,343)
Մատակարարներին վճարված դրամական միջոցներ	(810,394)	(1,890,484)
Վճարված հարկեր և պարտադիր վճարներ, բացառությամբ շահութահարկի	(582,147)	(300,325)
Վճարումներ սոցիալական Ապահովագրության հիմնադրամ	-	(242,005)
Վճարված կրթաթոշակ	(56,560)	(72,126)
Տրված դրամաշնորհներ և օգնություններ	(50,417)	(101,922)
Այլ վճարումներ	(33,128)	(23,045)
Վճարված շահութահարկ	(32,897)	(41,086)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**(165,672)**	**481,667**
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների վաճառքներից	6	25
Ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների ձեռք բերման գծով	(7,709)	(56,121)
Ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների ընթացիկ սպասարկման համար	-	(1,133)
Այլ վճարումներ	-	-
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**(7,703)**	**(57,229)**
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Այլ վճարումներ	-	-
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	-	-
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ (նվազում)/աճ	**(173,375)**	**424,438**
Արտարժույթի փոխարժեքի փոփոխման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	9,026	3,014
Դրամական միջոցների տարեվերջի մնացորդը	**728,261**	**892,610**

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող կից ծանոթագրությունների հետ մեկտեղ, էջ 7-26:

Ռեկտոր Գլխավոր հաշվապահ

Կ. Աթոյան Ա. Մարգարյան

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

<Հայաստանի Պետական Տնտեսագիտական Համալսարան> ՊՈԱԿ

2013թ դեկտեմբերի 31-ին հաշվեփակված տարվա համար

1.Կազմակերպչական կառուցվածքը և հիմնական գործունեությունը

«Հայաստանի Պետական Տնտեսագիտական Համալսարան» Պետական Ոչ Առևտրային Կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) ստեղծվել է է «Հայաստանի Պետական Տնտեսագիտական Ինստիտուտ» Պետական Ոչ Առևտրային Կազմակերպության վերակազմավորման արդյունքում: Իրավաբանական անձի պետական գրանցման վկայականի Ներդիր համար 003 առ 31.12.2013թ.: Կազմակերպության հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության:

Կազմակերպությունն իր գործունեության ընթացքում ղեկավարում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով (այսուհետ՝ Օրենսգիրք), «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ Օրենք), իրավական այլ ակտերով (հետագայում՝ օրենսդրություն) և իր կանոնադրությամբ:

Կազմակերպության իրավաբանական հասցեն է՝ ք.Երևան, Նալբանդյան 128:

Կազմակերպությունն իրավունք ունի իրականացնելու ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

- բարձրագույն մասնագիտական, հետբուհական մասնագիտական, միջին մասնագիտական, լրացուցիչ կրթության կազմակերպում,
- օտարերկրյա դիմորդների նախապատրաստական և բարձրագույն կրթության կազմակերպում,
- գիտամանկավարժական կադրերի պատրաստում, վերապատրաստում և մասնագիտական որակավորման բարձրացում,
- գիտահետազոտական աշխատանքների իրականացում,
- ուսումնագիտաարտադրական գործունեության ծավալում և արտադրանքի իրացում,
- հրատարակչական, տպագրական գործունեության ծավալում և դրա արդյունքների իրացում,
- համակարգչային ծրագրերի և լեզուների ուսուցման կազմակերպում,
- հանրակացարանաբնակ ուսանողների կենցաղի կազմակերպում և սպասարկում,
- սովորողների և աշխատողների սննդի և հանգստի կազմակերպում, խորհրդատվական, թարգմանչական, փորձագիտական հաշվապահական ծառայությունների մատուցում:

Կազմակերպությունը կարող է իրականացնել օրենքով չարգելված այլ տեսակի տնտեսական գործունեություն:

Օրենքով սահմանված գործունեության առանձին տեսակներով Կազմակերպությունը կարող է զբաղվել միայն լիցենզիայի (հատուկ թույլտվության) առկայության դեպքում՝ լիցենզիայի ստանալու պահից կամ նրանում նշված ժամկետում:

Կազմակերպությունը ք. Երևան, Նալբանդյան 128 հասցեում ունի լիցենզիա N0047՝ բակալավրի կրթական ծրագիր իրականացնելու համար, լիցենզիա N0042՝ մագիստրոսի կրթական ծրագիր իրականացնելու համար,

Վայոց ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, Վայքի 4 հասցեում ունի լիցենզիա N0076՝ բակալավրի կրթական ծրագիր իրականացնելու համար, լիցենզիա N0062՝ մագիստրոսի կրթական ծրագիր իրականացնելու համար,

ք. Գյումրի, Վ. Սարգսյան փ. 32 ունի լիցենզիա N0057՝ բակալավրի կրթական ծրագիր իրականացնելու համար, լիցենզիա N0049՝ մագիստրոսի կրթական ծրագիր իրականացնելու համար: Նշված բոլոր լիցենզիաների գործողության ժամկետը անժամկետ է:

Կազմակերպության կառավարումը իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և կանոնադրության համապատասխան, ինքնակառավարման հիման վրա՝ միանձնյա ղեկավարման և կոլեգիալության սկզբունքների զուգակցմամբ, համալսարանի խորհրդի, գիտական խորհրդի և ռեկտորի գործառույթների իրականացմամբ:

Կազմակերպությունն իր կազմի մեջ մտնող բոլոր ստորաբաժանումների հետ միասին ուսումնական, գիտական և արտադրական ամբողջություն է: Կազմակերպության մասնաճյուղերն են ՀՀ Շիրակի մարզի

Գյումրի և Վայոց ձորի Եղեգնաձոր քաղաքների մասնաճյուղերը, որոնք գործում են Կազմակերպության անունից, իրենց կանոնադրություններին և ՀՀ օրենսդրությանը համապատասխան:
ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղը հիմնադրվել է 1997թ. մայիսի 30-ին՝ ըստ ՀՀ Կառավարության 131-րդ որոշման: Մեկ ֆակուլտետով, երկու մասնագիտությամբ (ֆինանսներ և վարկ, հաշվապահական հաշվառում և աուդիտ) ստեղծված բուհն այսօր արդեն պատրաստում է տնտեսագետներ հետևյալ մասնագիտություններով և մասնագիտացումներով (միայն առկա ուսուցմամբ)՝ կառավարում (բակալավրիատ), ֆինանսներ (բակալավրիատ, մագիստրատուրա), կոմերցիա (բակալավրիատ), բիզնեսի կառավարում (մագիստրատուրա), հաշվապահական հաշվառում ըստ ճյուղերի (բակալավրիատ, մագիստրատուրա): Ուսանողների թիվը 560 է: Երկաստիճան կրթական համակարգը ներդրվել է 2004-2005 ուստարվանից: Մասնաճյուղի տնօրենն է տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Սամսոն Դավոյանը: Հասցե՝ ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի, Վ. Սարգսյան 32:
ՀՊՏՀ Եղեգնաձորի մասնաճյուղը հիմնադրվել է 2007 թվականին ՀՀ Կառավարության որոշմամբ: Առաջին ընդունելությունը կազմակերպվել է 2008 թվականին երեք մասնագիտությունների գծով՝ Ֆինանսներ, Միջազգային տնտեսագիտական հարաբերություններ և Կառավարում: Ուսանողների թիվը շուրջ 217 է: Մասնաճյուղն ունի ինչպես անվճար՝ տարկետման իրավունքով, այնպես էլ վճարովի համակարգի ուսուցման տեղեր: Պրոֆեսորադասախոսական անձնակազմի հիմնական մասը ժամանում է մայրաքաղաքից: Մասնաճյուղի տնօրենն է տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Սոս Խաչիկյանը: Հասցե՝ ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, Վայքի 4:
ՀՊՏՀ Եղեգնաձորի մասնաճյուղը 2012 թվականի հունվարի 1-ից գործում է ՀՊՏՀ առանձնացված ստորաբաժանման կարգավիճակով և տնտեսական գործառնությունների հաշվապահական ձևակերպումները կատարվում են ՀՊՏՀ հաշվապահական հաշվառման բաժնի կողմից:
Մայր բուհի ուսանողների քանակը 7,468 է:
2013թ դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպությունը իր երկու մասնաճյուղերի հետ միասին ունեցել է 979 աշխատող:
Կազմակերպության ղեկավարն է ռեկտոր՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Կորյուն Աթոյանը:

2. Գործարար միջավայր

Հայաստանի գործարար միջավայր

Կազմակերպությունն իր գործունեությունն իրականացնում է միայն Հայաստանում: Հետևաբար, Կազմակերպության գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկաները, որոնց բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակվում են զարգանալ, սակայն կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ և ենթակա են հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական ու ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար: Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Կազմակերպության գործունեության և ֆինանսական վիճակի վրա գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

3. Պատրաստման հիմունքներ

(ա) Համապատասխանության մասին հայտարարություն

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՍՍ) պահանջների համաձայն, որոնք հրապարակվել են Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից և Մեկնաբանությունների՝ հաստատված Ֆինանսական Հաշվետվությունների Մեկնաբանությունների Միջազգային Կոմիտեի կողմից (ՖՀՄՍԿ):

(բ) Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ ածանցյալ ֆինանսական գործիքների, որոնք հաշվառվում են իրական արժեքով և հիմնական միջոցների, որոնք վերաչափվում են իրական արժեքով կանոնավոր հիմունքով:

(գ) Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը ՀՀ դրամն է («դրամ»), որը հանդիսանում է Կազմակերպության ֆունկցիոնալ արժույթը և սույն ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը: Ֆինանսական ամբողջ տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

(դ) Գնահատումների և դատողությունների օգտագործում

Այս ֆինանսական հաշվետվությունները ՖՀՍՍ-ի պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունը կատարել է մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսի ներկայացված գումարների վրա : Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից :

Գնահատումներն ու համապատասխան ենթադրությունները շարունակաբար վերանայվում են : Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում որում վերանայվել են և այն ապագա ժամանակշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

4.Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների նկատմամբ:

(ա) Արտարժույթ

Արտարժույթով գործարքներ

Արտարժույթով իրականացված գործարքները փոխարկվում են ՀՀ դրամի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները վերափոխարկվում են ՀՀ դրամի այդ օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Դրամային միավորների գծով արտարժույթով իրականացված գործարքներից շահույթը կամ վնասը հանդիսանում է հաշվետու տարվա սկզբի դրությամբ ֆունկցիոնալ արժույթով արտահայտված, արդյունավետ տոկոսադրույքով և ժամանակաշրջանի ընթացքում վճարումներով ճշգրտված ամորտիզացված արժեքի և արտարժույթով արտահայտված ու հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ գործող փոխարժեքով փոխարկված ամորտիզացված արժեքի տարբերությունը : Սկզբնական արժեքով չափվող արտարժույթով արտահայտված ոչ դրամային միավորները փոխարկվում են գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Արտարժույթի վերափոխարկումից առաջացած տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում:

(բ) Ֆինանսական գործիքներ

Ոչ ածանցյալ ֆինանսական գործիքներ

Ոչ ածանցյալ ֆինանսական գործիքները ներառում են առևտրական և այլ դեբիտորական պարտքերը, դրամական միջոցները և դրանց համարժեքները, առևտրական և այլ կրեդիտորական պարտքերը:

Կազմակերպությունը դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչում է դրանց առաջացման օրը: Բոլոր այլ ֆինանսական ակիտվների սկզբնական ճանաչումը տեղի է ունենում առք ու վաճառքի օրը, երբ Կազմակերպությունը դառնում է գործիքի պայմանագրային դրույթների կողմ:

Կազմակերպությունը ապաճանաչում է ֆինանսական ակտիվը, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ փոխանցում է ֆինանսական ակտիվից դրամական հոսքերի ստացման պայմանագրային իրավունքները, այդպիսի գործարքում, որում փոխանցվում են ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները: Մասնակցությունը փոխանցված ակտիվում, որն առաջացել կամ պահպանվել է Կազմակերպության կողմից, ճանաչվում է որպես առանձին ակտիվ կամ պարտավորություն:

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլվելով զուտ գումարով, միայն այն դեպքում, եթե Կազմակերպությունն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, ինչպես նաև հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն:

Կազմակերպությունը ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներին է դասում դեբիտորական պարտքերը:

Դեբիտորական պարտքեր

Դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներն են, որոնք գնանշված չեն գործող շուկայում: Այս ակտիվների սկզբնական ճանաչումը տեղի է ունենում իրական արժեքով՝ գումարած ուղղակիորեն վերագրելի գործարքի հետ կապված ծախսումները: Սկզբնական ճանաչումից հետո դեբիտորական պարտքերը չափվում են ամորտիզացված արժեքով, կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ հանած արժեզրկումից կորուստները:

Դեբիտորական պարտքեր դասակարգը ներառում է ակտիվների հետևյալ դասերը՝ առևտրական և այլ դեբիտորական պարտքերը ու դրամական միջոցները և դրանց համարժեքները:
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ են համարվում դրամական միջոցների մնացորդները և ընթացիկ բանկային հաշիվները:

Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ

Ֆինանսական պարտավորությունների սկզբնական ճանաչումը տեղի է ունենում առք ու վաճառքի օրը, երբ Կազմակերպությունը դառնում է գործիքի պայմանագրային դրույթների կողմ:
Կազմակերպությունն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ պայմանագրում նշված պարտականությունը կատարվում է կամ չեղյալ է համարվում կամ ուժը կորցնում է:
Կազմակերպությունը ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունները դասակարգում է այլ ֆինանսական պարտավորությունների դասին: Այս ֆինանսական պարտավորությունների սկզբնական ճանաչումը տեղի է ունենում իրական արժեքով՝ հանած գործարքին ուղղակիորեն վերագրելի բոլոր ծախսերը: Սկզբնական ճանաչումից հետո այս ֆինանսական պարտավորությունները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Ածանցյալ ֆինանսական գործիքներ

Ածանցյալ գործիքների սկզբնական ճանաչումը տեղի է ունենում իրական արժեքով, իսկ գործարքին ուղղակիորեն վերագրելի ծախսերը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կատարվելուն պես: Սկզբնական ճանաչումից հետո ածանցյալ գործիքները չափվում են իրական արժեքով, և դրանց փոփոխությունները ճանաչվում են անմիջապես շահույթում կամ վնասում:
Պարունակվող ածանցյալ գործիքներն առանձնացվում են հիմնական պայմանագրից և հաշվառվում են առանձին, եթե պարունակվող ածանցյալ գործիքի ու հիմնական պայմանագրի տնտեսական բնութագրերը և ռիսկերը սերտորեն կապված չեն, առանձին գործիք, որի պայմանները նման են պարունակվող ածանցյալ գործիքի պայմաններին, կբավարարեր ածանցյալ գործիքի սահմանմանը, և բաղադրյալ գործիքը չի չափվում իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով: Առանձնացվող պարունակվող ածանցյալ գործիքի իրական արժեքի փոփոխությունները ճանաչվում են անմիջապես շահույթում կամ վնասում:

(գ) Հիմնական միջոցներ

Ճանաչում և չափում

Հիմնական միջոցների միավորների սկզբնական ճանաչումը տեղի է ունենում սկզբնական արժեքով:
Սկզբնական արժեքը ներառում է ակտիվի ձեռք բերմանն ուղղակի վերագրելի ծախսումները: Սեփական ուժերով կառուցված ակտիվների սկզբնական արժեքը ներառում է նյութերի արժեքը, ուղղակի աշխատուժի գծով ծախսերը, ակտիվն իր նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ անմիջականորեն կապված ցանկացած այլ ծախսումները, ակտիվի ապատեղակայման և քանդման ծախսերը, տեղանքի վերականգնման ծախսերը և փոխառության ծախսումները :
Երբ հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, այդ բաղկացուցիչները հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ (հիմնական բաղկացուցիչներ) :
Հիմնական միջոցի միավորի օտարումից ստացված շահույթը կամ վնասը որոշվում է համեմատելով օտարումից ստացված մուտքերը հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքի հետ և ճանաչվում են զուտ հիմունքով «Այլ եկամուտ/այլ ծախսեր» հոդվածում՝ շահույթում կամ վնասում : Վերագնահատված ակտիվների վաճառքի դեպքում, վերագնահատման պահուստում ներառված գումարները փոխանցվում են չբաշխված շահույթի:

Հետագա ծախսումներ

Հիմնական միջոցների բաղկացուցչի փոխարինման ծախսերը ճանաչվում են միավորի հաշվեկշռային արժեքում, երբ հավանական է, որ Կազմակերպություն կհոսեն այդ միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները և վերջինիս արժեքը հնարավոր կլինի արժանահավատորեն չափել: Փոխարինվող բաղկացուցչի հաշվեկշռային արժեքն ապաճանաչվում է: Հիմնական միջոցների ամենօրյա սպասարկման ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ առաջանալուն պես:

Վերագնահատում

Եթե հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով աճում է, ապա աճը ճանաչվում է վերագնահատման պահուստում՝ ուղղակիորեն սեփական կապիտալում : Սակայն եթե այդ աճը վերականգնում է նույն ակտիվի շահույթում կամ վնասում ճանաչված նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած նվազումը, ապա այն ճանաչվում է շահույթում կամ վնասում : Եթե հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով նվազում է, նվազումը ճանաչվում է շահույթում կամ վնասում : Սակայն եթե այդ նվազումը վերականգնում է նույն ակտիվի այլ համապարփակ եկամտում ճանաչված նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած աճը, ապա այն ճանաչվում է ուղղակիորեն այլ համապարփակ եկամտում:

Մաշվածություն

Մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի սկզբնական արժեքի հիման վրա՝ հանած դրա մնացորդային արժեքը : Առանձին ակտիվների էական բաղկացուցիչները գնահատվում են, և եթե բաղկացուցչի օգտակար ծառայության ժամկետը տարբերվում է ակտիվի մնացած մասերի օգտակար ծառայության ժամկետից, ապա այդ բաղկացուցչի մաշվածությունն առանձին է հաշվարկվում :

Ակտիվների գծով մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցների յուրաքանչյուր մասի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, քանի որ այս մեթոդն առավել ճիշտ է արտացոլում ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտների օգտագործման մոդելը :

Ստորև ներկայացված են օգտակար ծառայության գնահատված ժամկետները ընթացիկ և համեմատական ժամանակաշրջանների համար :

Հիմնական միջոցների խմբեր	ժամանակա-հատված	2013թ.	2012թ.
Հողամասեր	տարի	-	-
Շենքեր	տարի	20	20
Կառուցվածքներ	տարի	20	20
Փոխանցող հարմարանքներ	տարի	10	10
Մեքենասարքվորումներ	տարի	10	10
Տրանսպորտային միջոցներ	տարի	8	8
Արտադրատնտեսական գույք	տարի	8	8
Կապի միջոցներ	տարի	10	10
Հաշվողական և համակարգչային տեխնիկա	տարի	1	1
Այլ հիմնական միջոցներ	տարի	10	10

Մաշվածության հաշվարկի մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում և անհրաժեշտության դեպքում՝ ճշգրտվում:

(դ) Ոչ նյութական ակտիվներ

Կազմակերպության կողմից ձեռք բերված ոչ նյութական ակտիվները, որոնք ունեն օգտակար ծառայության սահմանափակ ժամկետ, չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և կուտակված արժեզրկումից կորուստները:

Հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն դեպքում, երբ ավելացնում են այն առանձին ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտները, որին վերաբերում են: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ Կազմակերպության ներսում ստեղծված գուդվիլը և ֆիրմային անվանումները, ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ առաջանալուն պես:

Ամորտիզացիան հաշվարկվում է ակտիվի սկզբնական արժեքի կամ այլ փոխարինող գումարի գծով՝ հանած դրա մնացորդային արժեքը:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում սկսած այն պահից երբ դրանք դառնում են մատչելի օգտագործվման համար, քանի որ այս մեթոդն առավել ճիշտ է արտացոլում ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտների օգտագործման մոդելը: Օգտակար ծառայության գնահատված ժամկետներն ընթացիկ և համեմատական ժամանակաշրջանների համար հետևյալն են.

Հիմնական միջոցների խմբեր	ժամանակա-հատված	2013թ.	2012թ.
Համակարգչային ծրագրեր	տարի	5	5
Լիցենզիաներ	տարի	5	5
Հողի օգտագործման իրավունք	տարի	99	99
Այլ ոչ նյութական ակտիվներ	տարի	5	5

Ամորտիզացիայի հաշվարկի մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում և անհրաժեշտության դեպքում՝ ճշգրտվում:

(ե) Պաշարներ

Պաշարները չափվում են սկզբնական արժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Պաշարների սկզբնական արժեքը հաշվարկվում է «առաջին մուտք, առաջին ելք» սկզբունքով և ներառում է պաշարների ձեռք բերման ծախսերը, արտադրական կամ փոխարկման ծախսերը և դրանք ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված այլ ծախսեր:

Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի գնահատված գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար գնահատված ծախսումները:

(զ) Արժեզրկում

Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվը, որը չի չափվում իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով, գնահատվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ արժեզրկման անկողմնակալ վկայություն հայտնաբերելու նպատակով: Ֆինանսական ակտիվը համարվում է արժեզրկված, եթե անկողմնակալ վկայությունը ցույց է տալիս, որ ակտիվի սկզբնական ճանաչումից հետո տեղի է ունեցել կորստի դեպք, և այդ կորստի դեպքը բացասական ազդեցություն է ունեցել տվյալ ֆինանսական ակտիվի ապագա գնահատված դրամական հոսքերի վրա, որը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ֆինանսական ակտիվների արժեզրկման անկողմնակալ վկայությունը կարող է ներառել պարտականությունների չկատարումը կամ վճարումների հետաձգումը պարտապանի կողմից, Կազմակերպությանը վճարվելիք գումարի պայմանների այնպիսի վերանայումը, որը Կազմակերպությունն այլ հանգամանքներում չէր դիտարկի, պարտապանի կամ թողարկողի սնանկացման հայտանիշները, Խմբի մեջ մտնող փոխառուների կամ թողարկողների վճարումների կարգավիճակի բացասական փոփոխությունները, տնտեսական պայմանները, որոնք կապված են ակտիվների գծով ձախողումների կամ աժեթղթի համար գործող շուկայի վերացման հետ: Ի լրումն, բաժնային արժեթղթերում կատարած ներդրումների համար արժեզրկման անկողմնակալ վկայություն է համարվում իրական արժեքի էական կամ երկարաձգված նվազումը:

Վարկեր և դեբիտորական պարտքեր

Կազմակերպությունը վարկերը և դեբիտորական պարտքերը դիտարկում է արժեզրկման վկայության անհատական և հավաքական հիմունքներով: Բոլոր առանձին վերցված նշանակալի վարկերը և դեբիտորական պարտքերը գնահատվում են արժեզրկման տեսանկյունից՝ անհատական հիմունքով: Եթե բոլոր առանձին վերցրած նշանակալի վարկերը և դեբիտորական պարտքերի արժեզրկման առանձին վկայություն չի հայտնաբերվում, ապա դրանք գնահատվում են հավաքական հիմունքով՝ տեղի ունեցած, սակայն չբացահայտված արժեզրկման վկայություն հայտնաբերելու նպատակով: Վարկերը և դեբիտորական պարտքերը, որոնք առանձին վերցրած նշանակալի չեն, գնահատվում են արժեզրկման տեսանկյունից հավաքական հիմունքով՝ խմբավորելով ռիսկի համանման բնութագրերով վարկերը և դեբիտորական պարտքերը:

Հավաքական արժեզրկումը գնահատելիս Կազմակերպությունը դիտարկում է պարտականությունների չկատարման նախկինում առկա միտումները, մարումների ժամկետները, կրած վնասի գումարը, որոնք ճշգրտվում են հաշվի առնելով ղեկավարության դատողությունները, թե արդյոք ներկա տնտեսական և վարկավորման պայմանները թույլ են տալիս, որպեսզի փաստացի վնասը ավել կամ պակաս լինի նախկինում առկա միտումներով առաջարկվողներից:

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվի արժեզրկումից կորուստը հաշվարկվում է որպես ակտիվի հաշվեկշռային արժեքի և այդ ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերություն:

Կորստի գումարը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ պահուստային հաշվում՝ դեբիտորական պարտքերի դիմաց: Կազմակերպությունը շարունակում է ճանաչել արժեզրկված ակտիվի գծով տոկոսները զեղչի վերականգնման միջոցով: Եթե հետագայում տեղի ունեցած դեպքը հանգեցնում է արժեզրկումից կորստի գումարի նվազեցմանը, ապա արժեզրկումից կորստի գումարի նվազեցումը հակադարձվում է շահույթի կամ վնասի միջոցով:

Ոչ ֆինանսական ակտիվներ

Կազմակերպության ոչ ֆինանսական ակտիվների, բացառությամբ պաշարների և հետաձգված հարկային ակտիվների, հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ որոշելու արդյոք առկա է որևէ հայտանիշ, ըստ որի ակտիվը կարող է արժեզրկված համարվել: Եթե որևէ այդպիսի հայտանիշ առկա է, ապա գնահատվում է ակտիվի փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստ ճանաչվում է, երբ ակտիվի կամ նրա դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրա գնահատված փոխհատուցվող գումարը:

Ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարը որոշվում է որպես հետևյալ երկու մեծություններից առավելագույնը. օգտագործման արժեք և իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսերը: Օգտագործման արժեքը գնահատելիս դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերը զեղչվում են՝ օգտագործելով մինչև հարկումը զեղչման այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի տվյալ շուկայի ներկա գնահատականը և այդ ակտիվին կամ դրամաստեղծ միավորին բնորոշ ռիսկերը: Արժեզրկման ստուգման նպատակով ակտիվները, որոնց արժեզրկումը հնարավոր չէ գնահատել անհատական հիմունքով, խմբավորվում են ակտիվների փոքրագույն խմբերի, որոնք շարունակական օգտագործման արդյունքում առաջացնում են այլ ակտիվներից կամ ակտիվների խմբերից կամ դրամաստեղծ միավորից մեծապես անկախ դրամական միջոցների ներհոսքեր:

Արժեզրկումից կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում: Դրամաստեղծ միավորների գծով ճանաչված արժեզրկումից կորուստները նվազեցնում են դրամաստեղծ միավորի (դրամաստեղծ միավորների խմբի) կազմի մեջ մտող ակտիվների հաշվեկշռային արժեքները հավասարաչափ հիմունքով:

Նախորդ ժամանակաշրջաններում ճանաչված արժեզրկումից կորուստները գնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ բացահայտելու, թե առկա է արդյոք որևէ հայտանիշ, ըստ որի արժեզրկումից կորուստը հնարավոր է, որ այլևս գոյություն չունի կամ նվազել է: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է, եթե փոխվել են փոխհատուցվող գումարը որոշելու համար օգտագործվող գնահատումները: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որ ակտիվի հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, առանց համապատասխան մաշվածության և ամորտիզացիայի, եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ:

(է) Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով պարտականությունները չափվում են առանց զեղչման և ծախսագրվում են համապատասխան ծառայությունը մատուցելուց
հետո: Պարտավորությունը ճանաչվում է այն գումարի չափով, որն ակնկալվում է վճարել որպես կարճաժամկետ դրամական միջոցների տեսքով պարգևավճար, եթե Կազմակերպությունն ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն այդ գումարը վճարել որպես անցյալ ծառայության արդյունք կամ կարող է արժանահավատորեն գնահատել պարտականությունը:

(ը) Պահուստներ

Պահուստը ճանաչվում է, երբ Կազմակերպությունը՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, ունի ընթացիկ իրավական կամ կառուցողական պարտավորություն, որը հնարավոր է արժանահավատորեն գնահատել, և հավանական է, որ այդ պարտավորությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Պահուստները որոշվում են ակնկալվող դրամական միջոցների ապագա հոսքերը զեղչելով հարկումից առաջ այն դրույքով, որն արտացոլում է տվյալ շուկայում դրամի ժամանակային արժեքը և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերը: Զեղչի վերականգնումը ճանաչվում է որպես ֆինանսական ծախս:

Ֆինանսական երաշխիքներ

Ֆինանսական երաշխիքներն իրենցից ներկայացնում են պայմանագրեր, որոնք պարտավորեցնում են Կազմակերպությանը կատարել որոշակի վճարումներ, որոնք կփոխհատուցեն երաշխիքի սեփականատիրոջ այն վնասները, որոնք նա կկրեր, եթե առանձին պարտատերն ի վիճակի չլիներ կատարել վճարումները պարտքային գործիքի պայմաններով նախատեսված ժամկետներում:

Ֆինանսական երաշխիքի գծով պարտավորության սկզբանական ճանաչումը կատարվում է իրական արժեքով, հաշվի չառնելով գործարքի հետ կապված ծախսումները, և հետագայում չափվում է երկու մեծություններից առավելագույնով՝ սկզբնապես ճանաչված գումարը՝ հանած կուտակված ամորտիզացիան կամ երաշխիքի գծով կորուստների պահուստը: Ֆինանսական երաշխիքների գծով կորուստների պահուստը ճանաչվում է, երբ գոյություն ունի վնաս կրելու հավանականություն և այդ վնասը հնարավոր է արժանահավատորեն չափել:

(թ)Հասույթ

Բնականոն գործունեության ընթացքում ծառայությունների մատուցումից ստացված հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով:

(ժ) Այլ ծախսեր

Սոցիալական ծախսումներ

Այն չափով որքանով սոցիալական ծրագրերին Կազմակերպության հատկացումները ծառայում են հանրության շահերին և չեն սահմանափակվում Կազմակերպության աշխատակիցներով, դրանք ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ առաջանալուն պես:

(ի) Ֆինանսական եկամուտ և ծախսեր

Ֆինանսական եկամուտը ներառում է ներդրումների գծով տոկոսային եկամուտը և փոխարժեքային տարբերություններից ստացված շահույթը: Տոկոսային եկամուտը ճանաչվում է շահույթում կամ վնասում հաշվեգրվելուն պես՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Ֆինանսական ծախսերը ներառում են փոխառությունների գծով տոկոսային ծախսերը, պահուստների գծով զեղչի վերականգնումը, փոխարժեքային տարբերություններից առաջացած վնասը և ֆինանսական ակտիվների գծով ճանաչված արժեզրկումից կորուստները՝ ներառյալ առևտրական դեբիտորական պարտքերը:

Փոխառության ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի չեն որակավորվող ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանը, ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Փոխարժեքային տարբերություններից առաջացած շահույթը և վնասը ներկայացվում են զուտ հիմունքով որպես ֆինանսական եկամուտ կամ ֆինանսական ծախս՝ կախված այն հանգամանքից, թե որ դիրքում է կատարվում արտարժույթի շարժը՝ զուտ շահույթի, թե զուտ վնասի:

(լ) Շահութահարկ

Շահութահարկը բաղկացած է ընթացիկ հարկից: Ընթացիկ հարկերը ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է ձեռնարկատիրական գործունեության միավորներին կամ ուղղակիորեն սեփական կապիտալում կամ այլ համապարփակ եկամտում ճանաչված տարրերին:

Ընթացիկ հարկը տարվա շահութահարկի գծով ակնկալվող վճարման ենթակա հարկի գումարն է, որը հաշվարկվում է կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ և ներառում է նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ճշգրտումները:

(խ) Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Կազմակերպության կողմից

Ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ, Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից թողարկվել են որոշակի նոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, սակայն դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Կազմակերպություն կողմից:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ բոլոր կիրառելի հրապարակումները կներդրվեն Կազմակերպության հաշվապահական հաշվառման քաղաքականությունում սկսած հրապարակման ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին իսկ ժամանակաշրջանից: Կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների համար կիրառելի նոր ստանդարտների, փոփոխությունների և մեկնաբանությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է ստորև: Որոշ այլ նոր ստանդարտներ և մեկնաբանություններ թողարկվել են, սակայն չի ակնկալվում, որ դրանք Կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների վրա էական ազդեցություն կունենան:

- ՖՀՍՍ 9 *«Ֆինանսական գործիքներ»* ստանդարտը գործում է 2013թ. հունվարի 1-ից և հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Նոր ստանդարտը փոխարինում է ՀՀՍՍ 39 *«Ֆինանսական գործիքներ. Ճանաչում և չափում»* ստանդարտին:

Ընթացիկ տարում Կազմակերպությունը ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2013թ հունվարի 1-ից հետո սկսվող ժամանակաշրջանի համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի և ՀՀՍՍԽ-ի Մեկնաբանման կոմիտեի կողմից:

5.Իրական արժեքի որոշում

Կազմակերպության հաշվապահական հաշվառման քաղաքականության մի շարք դրույթներ և բացահայտումներ պահանջում են իրական արժեքի որոշում ինչպես ֆինանսական, այնպես էլ ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների համար: Իրական արժեքները որոշվել են չափման և բացահայտման նպատակով՝ հիմք ընդունելով ստորև ներկայացված մեթոդները: Կիրառելիության դեպքում, իրական արժեքների որոշման ժամանակ կատարած ենթադրությունների մասին լրացուցիչ տեղեկատվությունը բացահայտվում է ակտիվին կամ պարտավորությանը վերաբերող ծանոթագրությունում:

(ա) Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցների իրական արժեքը հիմնականում որոշվում է կիրառելով մաշեցված փոխարինման արժեքը, բացառությամբ այն միավորների, որոնց համար առկա է համանման հիմնական միջոցների ակտիվ շուկա և որոնց իրական արժեքը հաշվարկվում է շուկայական արժեքի հիման վրա: Հիմնական միջոցների շուկայական արժեքն այն գնահատված գումարն է, որով հիմնական միջոցը գնահատման ամսաթվի դրությամբ կարող է փոխանակվել պատրաստակամ գնորդի և պատրաստական վաճառողի միջև՝ «անկախ կողմերի միջև գործարքում» համապատասխան շուկայավարում կատարելուց հետո, որտեղ կողմերը գործում են իրազեկորեն և առանց հարկադրության: Սարքավորումների, տնտեսական միջոցների իրական արժեքի հիմքում ընկած է շուկայական մոտեցումը՝ կիրառելով համանման միավորների համար գնանշվող շուկայական արժեքը՝ վերջինիս առկայության դեպքում:

Գնանշվող շուկայական արժեքի բացակայության դեպքում, հիմնական միջոցների իրական արժեքը հիմնականում որոշվում է կիրառելով մաշեցված փոխարինման արժեքը: Այս մեթոդը դիտարկում է հիմնական միջոցների վերարտադրման կամ փոխարինման ծախսերը՝ հաշվի առնելով ֆիզիկական, ֆունկցիոնալ կամ տնտեսական մաշվածությունը և հնացածությունը:

(բ) Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր

Առևտրական և այլ դեբիտորական պարտքերի իրական արժեքը, բացառությամբ անավարտ աշխատանքի, գնահատվում է որպես հաշվետու ամսաթվի դրությամբ գործող շուկայական տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների ապագա հոսքերի ներկա արժեք: Իրական արժեքը որոշվում է բացահայտման նպատակների համար:

հազար ՀՀ դրամ

	Շենքեր շինություններ, կառուցվածքներ	Տրանսպորտային միջոցներ	Մեքենա-սարքավորումներ	Արտադր. գույք տնտեսակ. գույք գործիքներ,այլ հմ	Այլ հիմնական միջոցներ գրականություն	Ընդամենը
Սկզբնական արժեք						
Առ 01 հունվարի 2012թ.	1,579,646	42,208	242,696	288,579	113,596	2,266,725
Ավելացումներ	294	-	16,820	21,680	2,385	41,179
Նվազեցումներ	-	-	(6,517)	(4,377)	-	(10,894)
Վերադասակարգում	9,372	600	2,789	25	-	12,786
Առ 31 դեկտեմբերի 2012թ.	1,589,312	42,808	255,788	305,907	115,981	2,309,796
Ավելացումներ	-	7,600	160,229	99,369	19,216	286,414
Վերագնահատում	-	-	29,370	45,243	-	74,613
Նվազեցումներ	-	-	(87)	-	(12,211)	(12,298)
Կապիտալացում	61,157	-	-	-	-	61,157
Վերադասակարգում	-	-	-	-	-	-
Առ 31 դեկտեմբերի 2013թ.	1,650,469	50,408	445,300	450,519	122,986	2,719,682
Կուտակված մաշվածություն						
Առ 01 հունվարի 2012թ.	487,891	24,238	221,402	219,130	101	952,762
Ավելացումներ	79,961	3,913	18,733	21,258	-	23,865
Նվազեցումներ	-	-	(6,517)	(4,377)	-	(10,894)
Վերադասակարգում	-	-	22	(22)	-	-
Առ 31 դեկտեմբերի 2012թ.	567,852	28,151	233,640	235,989	101	1 ,065,733
Ավելացումներ	85,191	4,433	35,046	8,986	836	134,492
Վերագնահատում	-	-	-	-	-	-
Նվազեցումներ	-	(9,564)	-	(45,426)	-	(54,990)
Վերադասակարգում	-	-	-	-	-	-
Առ 31 դեկտեմբերի 2013թ.	653,043	23,020	268,686	199,549	937	1,145,235
Զուտ հաշվեկշռային արժեք						
Առ 1 հունվարի 2012թ.	1,091,755	17,970	21,294	69,449	113,495	1,313,963
Առ 31 դեկտեմբերի 2012թ.	1,021,460	14,657	22,148	69,918	115,880	1,244,063
Առ 31 դեկտեմբերի 2013թ.	997,426	27,388	176,614	250,970	122,049	1,574,447

2012թ դեկտեմբերի 31-ի և 2013թ դեկտեմբերի 31-ի դրությամբ Կազմակերպությունը չի ունեցել գրավադրված հիմնական միջոցներ:

7. Ոչ նյութական ակտիվներ

հազար ՀՀ դրամ

	Համակարգ-չային ծրագրեր	Լիցենզիաներ, վստահագրեր	Այլ ոչ նյութական ակտիվներ	Ընդամենը
Սկզբնական արժեք				
Առ 01 հունվարի 2012թ.	8,695	179	250	9,124
Ավելացումներ	-	-	-	-
Նվազեցումներ	-	(92)	-	(92)
Առ 31 դեկտեմբերի 2012թ.	8,695	87	250	9,032
Ավելացումներ	4,600	1,300	46	5,946
Նվազեցումներ	(3,956)	-	-	(3,956)
Առ 31 դեկտեմբեր 2013թ.	9,339	1,387	296	11,022
Կուտակված մաշվածություն				
Առ 01 հունվարի 2012թ.	4,202	-	75	4,277
Ավելացումներ	962	-	29	991
Նվազեցումներ	-	-	(6)	(6)
Առ 31 դեկտեմբերի 2012թ.	5,164	-	98	5,262
Ավելացումներ	5,078	869	-	5,947
Նվազեցումներ	(5,094)	(90)	-	(5,184)
Առ 31 դեկտեմբեր 2013թ.	5,148	779	98	6,025
Զուտ հաշվեկշռային արժեք				
Առ 1 հունվարի 2012թ.	4,493	179	175	4,847
Առ 31 դեկտեմբերի 2012թ.	3,531	87	152	3,770
Առ 31 դեկտեմբերի 2013թ.	4,191	608	198	4,997

8. Պաշարներ

հազար ՀՀ դրամ

	2013թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	2012թ դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հումք եւ նյութեր	21,458	8,930
Գնովի կիսապատրաստուկներ, համալրող շինվածքներ եւ դետալներ	-	-
Վառելիք	5,399	4,320
Պահեստամասեր	13,777	5,394
Շինանյութեր	22,563	13,301
Տարա եւ տարանյութեր	115	15
Գյուղատնտեսական նշանակության նյութեր	13	30
Վերամշակման հանձնված նյութեր	-	-
Այլ նյութեր	1,866	760
Ապրանքներ	489	-
Այլ	-	-
Ընդամենը	65,680	32,750

2013թ. դեկտեմբերի 31-ի և 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չունի գրավադրված պաշարներ:

Պաշարները ներկայացվում է սկզբնական արժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով:

9. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Առևտրային դեբիտորական պարտքեր	2013թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	2012թ դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դեբիտորական պարտքեր ուսման վճարների գծով	480,779	445,370
Տրված Կանխավճարներ մատակարարներին	2,173	24,428
Տրված Կանխավճարներ Շնորհների գծով	30,435	26,283
Դեբիտորական պարտքեր աշխատավարձի գծով	4	-
Դեբիտորական պարտքեր հարկերի եւ այլ պարտադիր վճարների գծով	31	228
Դեբիտորական պարտքեր շահութահարկի գծով	10,072	12,621
Այլ դեբիտորական պարտքեր	1,868	188
Ընդամենը առևտրային և այլ դեբիտորական պարտքերում ներառված ընթացիկ ֆինանսական ակտիվներ	**525,362**	**509,118**

10. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

		հազար ՀՀ դրամ
	2013թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	2012թ դեկտեմբերի 31-ի դրությամբ
Մնացորդ բանկերում	727,416	886,142
Կանխիկ միջոցներ	845	6,468
ԸՆԴԱՄԵՆԸ	728,261	892,610

11. Շնորհներ

Ակտիվներին վերաբերող շնորհներ հազար ՀՀ դրամ

	2013թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	2012թ դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հունվարի 1-ի դրությամբ	989,470	1,059,950
Տարվա ընթացքում ստացված	106,585	17,326
Շնորհի վերադարձ	-	-
Ակտիվներին վերաբերող շնորհի տեղափոխում կուտակված շահույթ	-	-
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում հաշվառված	(89,674)	(87,806)
դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,006,381	989,470

Եկամուտներին վերաբերող շնորհներ հազար ՀՀ դրամ

	2013թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	2012թ դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հունվարի 1-ի դրությամբ	257,768	284,179
Տարվա ընթացքում ստացված	446,802	-
Շնորհի վերադարձ	-	-
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում հաշվառված	(498,550)	(26,411)
դեկտեմբերի 31-ի դրությամբ	206,020	257,768

12. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

	31.12.2013թ	31.12.2012թ
Կրեդիտորական պարտք գնումների գծով	16,119	9,699
Կրեդիտորական պարտքեր ուսման վարձերի գծով	950,364	880,279
Ստացված կանխավճարներ	-	-
Պարտքեր հարկերի եւ այլ պարտադիր վճարների գծով՝ բացի շահութահարկից	71,784	717
Ընդամենը	1,038,267	890,695
Պարտքեր պարտադիր սոցիալական ապահովության գծով	-	3,172
Պարտքեր աշխատավարձի եւ աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով	4,985	4,730
Պարտքեր աշխատակիցներին արձակուրդայինի պահուստի գծով	35,618	
Ընդամենը	40,603	7,902

13. Այլ ընթացիկ պարտավորություններ

Հետաձգված եկամուտ	-	5,735
Կրեդիտորական պարտքեր կրթաթոշակի գծով	3,571	3,721
Արիմիության անդամավճարի գծով	-	1,976
Գործառնական վարձակալության գծով	4,262	4,262
Այլ	473	474
Ընդամենը	**8,306**	**16,168**

14. Հասույթ, վաճառքի ինքնարժեք

Հասույթ		հազար ՀՀ դրամ
	2013թ	2012թ
Ուսման վարձերի գծով մատուցված ծառայություններ	3,162,773	2,804,459
Ճաշարանի գործունեությունից	7,896	4,076
Հանգստյան տան գործունեությունից	-	11,046
Ուսանողներին մատուցված այլ ծառայությունների գծով	11,014	5,875
	3,181,683	**2,825,456**

Վաճառքի ինքնարժեք		հազար ՀՀ դրամ
	2013թ	2012թ
Աշխատանքի վճարման ծախսեր	2,077,567	1,715,036
Հիմնական միջոցների մաշվածության, դրանց նորոգման եւ սպասարկման ծախսեր	37,879	32,600
Գրասենյակային եւ կոմունալ ծախսեր	17,861	33,330
Փոստի եւ հեռահաղորդակցության ծախսեր	5,840	1,875
Նյութական ծախսեր	18,656	17,203
Այլ ծախսեր	4,363	2,513
	2,162,166	**1,802,557**

Իրացման ծախսեր		հազար ՀՀ դրամ
	2013թ	2012թ
Մարքետինգային և գովազդային ծախսեր	383	1,210
	383	**1,210**

15. Վարչական ծախսեր

հազար ՀՀ դրամ

	2013թ	2012թ
Աշխատանքի վճարման ծախսեր	708,314	668,407
Աշխատանքի վճարման ծախսեր արձակուրդայինի պահուստաֆոնդի գծով	35,618	-
Հիմնական միջոցների եւ ոչ նյութական ակտիվների մաշվածության (ամորտիզացիայի), դրանց նորոգման եւ սպասարկման ծախսեր	30,053	15,512
Գովազդ և խորհրդատվություն	-	-
Գործուղման եւ ներկայացուցչական ծախսեր	39,041	12,206
Փոստի եւ հեռահաղորդակցության ծախսեր	1,646	6,759
Գրասենյակային եւ կոմունալ ծախսեր	6,970	18,838
Աուդիտորական եւ խորհրդատվական ծախսեր	5,013	9,804
Բանկային ծառայությունների ծախսեր, ապահովության ծախսեր	9,390	307
Չփոխհատուցվող հարկերից ծախսեր	25,716	11,819
Պահնորդային և տրանսպորտային ծառայություններ	7,261	12,279
Նյութական ծախսեր	-	25,217
Վարչական այլ ծախսեր	50,409	909
Ընդամենը	919,431	782,057

16. Այլ գործառնական եկամուտներ և ծախսեր

Այլ եկամուտներ

հազար ՀՀ դրամ

	2013թ	2012թ
Կրթաթոշակ	55,853	68,601
Ֆինանսավորում	-	24,692
Այլ դրամաշնորհներից	29,918	1,724
Ուսանողներին մատուցած այլ ծառայություններից	-	486
Նյութական վնասի փոխհատուցումից եկամուտներ	253	-
Եկամուտներ տույժերից տուգանքներից	333	-
Ընթացիկ բանկային հաշիվներին հաշվեգրված տոկոսներ	-	5,339
Գործառնական այլ եկամուտներ	22,946	5,500
Ընդամենը	109,303	106,342

Այլ ծախսեր

հազար ՀՀ դրամ

	2013թ	2012թ
Կրթաթոշակ	55,853	68,601
Անձնակազմի վարձատրություն	2,618	8,909
Վարձակալության գծով ծախս	-	9,472
Նյութական ծախսեր	12,092	11,295
Դասընթացների և քննությունների անցկացման ծախսեր	3,540	3,811
Ծախսեր տույժերից, տուգանքներից, դատական ծախսեր	25	532
Ուսխորհրդի ծախսեր ՀԵՀ-ի հաշվին	7	1,928
Արտարժույթի փոխարկումից ծախսեր	131	-
Գործառնական այլ ծախսեր	8,781	9,491
Ընդամենը	**83,047**	**114,039**

17. Շարունակվող գործունեության այլ եկամուտներ և ծախսեր

Շարունակվող գործունեության այլ եկամուտներ

	2013թ	2012թ
Ոչ ընթացիկ ակտիվների օտարումից եկամուտներ	79	45
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից օգուտներ	96,154	3,003
Շնորհներից եւ անհատույց ստացումներից եկամուտներ	89,675	-
Այլ եկամուտներ	80	190
	185,988	**3,238**

Շարունակվող գործունեության այլ ծախսեր

Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից կորուստներ	(96,640)	-
Անհատույց տրված ակտիվների գծով ծախսեր	(138,449)	(57,635)
Այլ ծախսեր	(164)	-
Ընդամենը	**(235,253)**	**(57,635)**
Ընդամենը շարունակվող գործունեության այլ եկամուտներ /ծախսեր	**(49265)**	**(54397)**

18. Շահութահարկ

Շահութահարկի գծով ծախսի հիմնական բաղադրիչներն են

	հազար ՀՀ դրամ	
	2013թ առ դեկտեմբերի 31-ի դրությամբ	2012թ առ դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ընթացիկ շահութահարկ՝		
Ընթացիկ շահութահարկի գծով ծախս	35,435	44,462
Հետաձգված հարկեր	21,381	-
Ժամանակային տարբերությունների ծագում և հակադարձում	-	-
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ներկայացված շահութահարկի գծով ծախս / (օգուտ)	**56,816**	**44,462**

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրում

				հազար ՀՀ դրամ
	2013թ առ դեկտեմբերի 31-ի դրությամբ	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)	2012թ առ դեկտեմբերի 31-ի դրությամբ	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)
Հաշվապահական շահույթ / (վնաս) մինչև շահութահարկով հարկումը	76,694	-	177,538	-
ՀՀ շահութահարկի պարտադիր 20% (2012թ.և 2013թ.՝ 20%) դրույքաչափով հաշվարկված շահութահարկ	15,339	20	35,508	20
(Չհարկվող)/չնվազեցվող հոդվածներ, զուտ	41,477	54	8,954	5
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ներկայացված շահութահարկի գծով ծախս / (օգուտ)	56,816	74	44,462	25

19. Ֆինանսական գործիքներ

Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 4. (բ)-ում:

Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված մնացորդները վերաբերում են ակտիվների և պարտավորությունների հետևյալ կատեգորիաներին.

Հազար դրամ

Ֆինանսական ակտիվներ		
	2013թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	2012թ դեկտեմբերի 31-ի դրությամբ (վերահաշվարկված)
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	728,261	892,610
Դեբիտորական պարտքեր ուման վճարների գծով	480,779	445,370
Տրված Կանխավճարներ մատակարարներին	2,173	24,428
Տրված Կանխավճարներ Շնորհների գծով	30,435	26,283
Դեբիտորական պարտքեր աշխատավարձի գծով	4	-
Դեբիտորական պարտքեր հարկերի եւ այլ պարտադիր վճարների գծով	31	228
Դեբիտորական պարտքեր շահութահարկի գծով	10,072	12,621
Այլ դեբիտորական պարտքեր	1,868	188
Ընդամենը ընթացիկ ֆինանսական ակտիվներ	1,253,623	1,401,728

Ֆինանսական պարտավորություններ

	2013թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	2012թ դեկտեմբերի 31-ի դրությամբ (վերահաշվարկված)
Կրեդիտորական պարտք գնումների գծով	16,119	9,699
Կրեդիտորական պարտքեր ուսման վարձերի գծով	950,364	880,279
Ստացված կանխավճարներ	-	-
Պարտքեր հարկերի եւ այլ պարտադիր վճարների գծով՝ բացի շահութահարկից	71,784	717
Պարտքեր պարտադիր սոցիալական ապահովության գծով	-	3,172
Պարտքեր աշխատավարձի եւ աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով	4,985	4,730
Պարտքեր աշխատակիցներին արձակուրդայինի պահուստի գծով	35,618	-
Հետաձգված եկամուտ	-	5,735
Կրեդիտորական պարտքեր կրթաթոշակի գծով	3,571	3,721
Արհմիության անդամավճարի գծով	-	1,976
Գործառնական վարձակալության գծով	4,262	4,262
Այլ	473	474
Ընդամենը ընթացիկ ֆինանսական պարտավորություններ	**1,087,176**	**914,765**

20. Ֆինանսական գործիքներ և ռիսկերի կառավարում

(ա) Ամփոփ ներկայացում

Ֆինանսական գործիքներն օգտագործելիս Կազմակերպությունը ենթարկում է հետևյալ ռիսկերին.

- իրացվելիության ռիսկ
- շուկայական ռիսկ

Սույն ծանոթագրությունում ներկայացված է տեղեկատվություն վերը նշված յուրաքանչյուր ռիսկին Կազմակերպության ենթարկվածության մասին, ինչպես նաև ռիսկերի չափման և կառավարման հետ կապված Կազմակերպության նպատակները, քաղաքականությունը և գործընթացները: Սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված են վերը նշված ռիսկերին վերաբերող թվային բացահայտումներ:

Ռիսկերի կառավարման հիմունքներ

Ղեկավարությունը պատասխանատվություն է կրում Կազմակերպության ռիսկերի կառավարման համակարգի մշակման և վերահսկողության համար:

Կազմակերպության ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել և վերլուծել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Կազմակերպությունը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և վերահսկման մեխանիզմներ, ինչպես նաև վերահսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը որոշված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և համակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանների ու Կազմակերպության գործունեության փոփոխություններն արտացոլելու նպատակով: Դասընթացների, կառավարման ստանդարտների և ընթացակարգերի միջոցով Կազմակերպությունը նպատակ ունի ձևավորել վերահսկման կանոնակարգված ու կառուցողական միջավայր, որտեղ բոլոր աշխատակիցները հստակ կպատկերացնեն ու կընկալեն իրենց դերերը և պարտականությունները:

(բ) Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր
Վարկային ռիսկին Կազմակերպության ենթարկվածությունը հիմնականում կախված է յուրաքանչյուր հաճախորդի առանձնահատկություններից: Այնուամենայնիվ, ղեկավարությունը դիտարկում է նաև հաճախորդների բազայի կառուցվածքը, ներառյալ տվյալ ոլորտի հաճախորդի ու երկրի կողմից հանձն առնված պարտականության չկատարման ռիսկը, քանի որ այս գործոնները կարող են ազդեցություն ունենալ վարկային ռիսկի վրա:

Կազմակերպությունը ձևավորում է արժեզրկման գծով պահուստ, որն իրենից ներկայացնում է առևտրական և այլ դեբիտորական պարտքերի գծով կրած վնասների Կազմակերպության գնահատականը: Այս պահուստը վերաբերում է անհատական հիմունքով ռիսկի զգալի գործոն պարունակող պարտքերին, որոնք արժեզրկված են:

(գ) Իրացվելիության ռիսկ
Իրացվելիության ռիսկն ենթադրում է, որ Կազմակերպությունը կունենա դժվարություններ՝ իր ֆինանսական պարտավորությունների հետ կապված պարտականությունները կատարելիս, որոնց մարումը պահանջում է դրամական միջոցների կամ մեկ այլ ֆինանսական ակտիվի տրամադրում: Իրացվելիության ռիսկի կառավարման հարցում Կազմակերպության մոտեցումն է ապահովել բավարար իրացվելիություն՝ բնականոն և արտակարգ իրավիճակներում պարտավորությունները կատարելու համար՝ առանց անընդունելի կորուստներ կրելու կամ Կազմակերպության համբավը վտանգելու:
Կազմակերպությունն ապահովում է ցպահանջ դրամական միջոցների այնպիսի չափի առկայություն, որը բավարար կլինի ակնկալվող գործառնական ծախսերը ծածկելու համար՝ ներառյալ ֆինանսական պարտականությունների սպասարկման ծախսերը: Այս պարագայում հաշվի չի առնվում առանձնահատուկ հանգամանքների հնարավոր ազդեցությունը, որոնք հնարավոր չէ կանխատեսել, օրինակ՝ բնական աղետները:

(դ) Շուկայական ռիսկ
Շուկայական ռիսկն Կազմակերպության եկամտի կամ նրա ֆինանսական գործիքների արժեքի փոփոխության ռիսկն է շուկայական գների, այդ թվում արտարժույթի փոխարժեքի դրույքների, տոկոսադրույքների և բաժնետոմսերի գների փոփոխության արդյունքում: Շուկայական ռիսկի կառավարման նպատակը ռիսկի այնպիսի կառավարումն ու վերահսկումն է, որը թույլ կտա պահպանել այս ռիսկին ենթարկվածության ստանձնն ընդունելի սահմաններում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

Արտարժույթի ռիսկ
Արտարժույթի ռիսկի նկատմամբ Կազմակերպության ենթարկվածությունը կապված է ֆունկցիոնալ արժույթից տարբեր այլ արժույթով արտահայտված վաճառքների, ձեռքբերումների հետ:

(է) Կապիտալի կառավարում
2006թ հոկտեմբերի 16-ի ռեկտորատի նիստում որոշել է, սկսած 2006 թվականից, ֆինանսատնտեսական գործունեության արդյունքում առաջացած շահույթի ազատ մնացորդը բաշխել հիմնադրամներին հետևյալ կերպ.
- պահուստային հիմնադրամ – 5 տոկոս,
- կուտակային հիմնադրամ – մնացորդի 40 տոկոս,
- սպառման հիմնադրամ – մնացորդի 60 տոկոս:
Ըստ հիմնադրամների բաշխված գումարները հետևյալն են.

	31.12.2013թ	31.12.2012թ
Պահուստային հիմնադրամ	79,166	23,462
Կուտակային հիմնադրամ	191,682	206,048
Սպառման հիմնադրամ	287,611	309,071
Ընդամենը	558,459	538,581

21. Պայմանական դեպքեր
(ա) Ապահովագրություն
Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանում: Կազմակերպությունը չունի ամբողջական ապահովագրություն իր բոլոր

շենքերի և սարքավորումների համար, ինչպես նաև այն ապահովագրված չէ գործունեության ընդհատումից և երրորդ կողմերի նկատմամբ պարտավորություններից, որոնք կարող են առաջանալ գույքին կամ շրջակա միջավայրին վնաս հասցնելուց՝ Կազմակերպության տարածքում տեղի ունեցած պատահարների կամ գործունեության հետևանքով: Քանի դեռ Կազմակերպությունը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է զգալի բացասական ազդեցություն ունենալ Կազմակերպության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

(բ) Հարկային պարտավորություններ

Հարկային պարտավորությունները Հայաստանում

Հայաստանի հարկային համակարգը համեմատաբար նոր է և բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական պարզաբանումների և դատավճիռների հաճախակի փոփոխություններով, որոնք հաճախ հստակ չեն, հակասական են և պահանջում են մեկնաբանություններ տարբեր հարկային մարմինների կողմից: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության մի շարք մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն սահմանել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

Այս փաստերը Հայաստանում կարող են այլ երկրների համեմատությամբ էական հարկային ռիսկ առաջացնել: Ղեկավարությունը գտնում է, որ համապատասխանորեն է գնահատել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի հարկային օրենսդրության իր մեկնաբանությունների, պաշտոնական հայտարարությունների և դատավճիռների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են էական լինել Կազմակերպության համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

22. Գործարքներ կապակցված կողմերի հետ

(ա) Գործարքներ ղեկավար անձնակազմի և նրանց ընտանիքների անդամների հետ

Ղեկավարության վարձատրությունը

01.01.2013-31.12.2013թթ. ընթացքում ղեկավար անձնակազմը, ռեկտոր՝ 1 մարդ, ստացել է 4,109.0 հազար դրամ, Խորհրդի անդամները՝ 14 մարդ, ստացել են 21,273.7 հազար դրամ:

(բ) Գործարքներ այլ կապակցված անձանց հետ

ՀՀ պետական բյուջեից՝ ի դեմս ՀՀ Կրթության և Գիտության Նախարարության, ստացվել է.
01.01.12-31.12.12թ՝ 305,808 հազար դրամ ֆինանսավորում:
01.01.13-31.12.13թ՝ 310,380 հազար դրամ ֆինանսավորում:

Ռեկտոր

Կ. Աթոյան

Գլխավոր հաշվապահ

Ա.Մարգարյան